ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 31.03.2016թ. թիվ 106-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հասարակական պաշտոնների նշանակման և ազատման վերաբերյալ» կարգի 1.3 կետի, 05.09.2016թ. թիվ 391-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 2.1 և 2.2 կետերի պահանջներով,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախորդ կազմի լիազորությունները դադարել են,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***Մեկ տարի ժամկետով Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամներ նշանակել՝***

- ***փաստաբան Կարեն Մեժլումյանին (արտոնագիր № 2),***
- ***փաստաբան Գեղամ Հակոբյանին (արտոնագիր № 794),***
- ***փաստաբան Արմինե Ֆանյանին (արտոնագիր № 1262),***
- ***փաստաբան Լիանա Բալյանին (արտոնագիր № 271),***
- ***փաստաբան Արսեն Մկրտչյանին (արտոնագիր № 2134):***

2. ***Փաստաբան Կարեն Մեժլումյանին նշանակել Հանձնաժողովի համակարգող:***

3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Հանձնաժողովի նորանշանակ անդամներին, ինչպես նաև փաստաբաններին (համապատասխան տեղեկությունը կայքում տեղադրելու միջոցով):***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

05 սեպտեմբերի 2016թ.
թիվ 392-Ա
ք. Երևան